երիվարի ուրուք յանկարծ առանց իրիք պատճառի, ասէին Սարակինոսք թէ՝ ետես զՀովանին Ռիգարտոսի, կացեալ 'ի հեւուստ 'ի վերայ միոյ լերանց Հրէաստանի ետես զքաղաքն Ս. այլ չէր հնար մերձենալ 'ի նա եւ կանգնել մեքենայս 'ի պարիսպ նորին, ուստի դարձաւ յետս հառաջանօք և թախծութեամբ սրտի մունչելով իբրեւ զառիւծ։ Զի Սալահատտին ամրացուցեալ էր զքաղաքն յամենայն կողմանց, և 'ի պատշճաւոր տեղւոջ զետեղեալ զբանակ իւր, մնայր գալստեան թշնամւոյն։ Իսկ Լատինք դարձեալ անտի անկան 'ի վերայ զօրաց, որք գային յԵգիպտոսէ, որոց զօրավարէր Ֆէլէքէտտին՝ եղբայր Սալիլայ, եւ ընդ նոսա վաճառականք բազումք, կոտորեցին զնոսա 'ի բերան սրոյ, և զայլսն ցիր և ցան կացուցին յանապատի անդ, ոմանք դարձան յԵգիպտոս, ոմանք կալան զճանապարհն Քերեքի, և այլք հասին առ Սուլթանն մերկ և կողոպուտ, և նորա մխիթարեալ քաջալերեաց զնոսա։ Ռիգարտոս դարձաւ 'ի Յոպպէ լի աւարաւ, եւ անտի մեկնեցաւ 'ի Պտղոմայիս եղեալ 'ի մտի պաշարել զՊերութ։ Տեսեալ զայսոսիկ Սուլթանին դիմեաց և նա ինքն 'ի վերայ Ռեմլէի և էառ զնա, բայց ոչ կարաց տիրել ներքին բերդին, և անտի զնացեալ պաշարեաց զՅոպպէ, և կործանեալ զմի կողմն պարսպին՝ մտին 'ի ներքս, եւ 'ի բերան սրոյ կոտորեցին զընդդիմակացսն, եւ յաւարի առնուլն զքաղաքն դտին զբեռինս և զաղխս Եգիպտական զօրուն, և բարձին զնոսա։ Իսկ ամրացեալքն 'ի բերդին՝ խնդրեցին զերդումն հաւատարմութեան, և ելին առ Սուլթանն Եպիսկոպոս քաղաքին և իշխանքն տալ զդանձս և զամբարս եւ խնդրել վերակացուս, և 'ի տարաժամիլ աւուրն, թողին կարդաւորել զգործն 'ի վաղիւն յառաւօտ։ Սակայն 'ի դիշերին յայնմիկ եհաս թագաւորն Անգղիոյ նաւուք 'ի Յոպպէ և եմուտ 'ի բերդն, և ազգ արար քրիստոնէից հանդարտիլ 'ի տեղիս իւրեանց։ Տրտմութիւն մեծ եղեւ Սուլթանին եւ ապաշաւ անբուժելի, թէ զի՞արդ յապաղեաց տիրել բերդին 'ի դիշերին յայնմիկ, և անտի դարձաւ 'ի Ռեմլէ։ Հուսկ ուրեմն խորհեցաւ թագաւորն Անգղիոյ վերջ տալ խռովութեանց և արիւնհեղութեանց, զի ստէպ ստէպ հասանէին յունկն նորա անախորժ եւ վնասակար զրոյցք